

(Փոփոխ. 22.05.12թ. ԳՆԽ թիվ 16L որոշում)

Հավելված  
Հայաստանի Հանրապետության  
դատարանների մախազահների խորհրդի  
2009թ. փետրվարի 27-ի թիվ 05L որոշման

**Դ Ա Տ Ա Կ Ա Ն Ծ Ա Ռ Ա Յ ՈՒ Թ Յ Ա Ն  
Պ Ա Շ Տ Ո Ն Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր # 205**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ  
ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՐՏՄԵՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ  
(ԳԴ-4.1-205)**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Հայաստանի Հանրապետության Դատական դեպարտամենտի (այսուհետ՝ Դեպարտամենտ) անձնակազմի կառավարման վարչության (այսուհետ՝ Վարչություն) կրտսեր մասնագետի պաշտոնն ընդգրկվում է դատական ծառայության պաշտոնների կրտսեր խմբի 1-ին ենթախմբում:

2. Վարչության կրտսեր մասնագետին «Դատական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Դեպարտամենտի ղեկավարը՝ Վարչության պետի ներկայացմամբ:

**II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳԵԿԱՎԱՐՄԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

3. Վարչության կրտսեր մասնագետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

4. Վարչության կրտսեր մասնագետն իրեն ենթակա աշխատողներ չունի:

5. Վարչության կրտսեր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության մասնագետներից մեկը:

6. Վարչության կրտսեր մասնագետը Վարչության մասնագետներից մեկի բացակայության դեպքում փոխարինում է նրանց:

7. Վարչության կրտսեր մասնագետը՝

ա) կատարում է Վարչության պետի հանձնարարականները.

բ) պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

### **III. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

8. Վարչության կրտսեր մասնագետը Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է Վարչության առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրների լուծմանը և որոշումների ընդունմանը:

### **IV. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ**

9. Վարչության կրտսեր մասնագետը՝

ա) Վարչության ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում.

բ) Դեպարտամենտի ներսում շփվում է Դեպարտամենտի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների հետ.

գ) Վարչության պետի հանձնարարությամբ Դեպարտամենտից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, հաշվետվություններով և այլն:

### **V. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ**

10. Վարչության կրտսեր մասնագետը իր լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է Վարչության առջև դրված գործառույթներից բխող խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներին:

## VI. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Վարչության կրտսեր մասնագետը՝

ա) ունի բարձրագույն կրթություն.

բ) ունի իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

դ) ունի գրական հայերենի պատշաճ իմացություն:

## VII. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12. Վարչության կրտսեր մասնագետը՝

ա) Վարչության պետի հանձնարարությամբ իրականացնում է Հայաստանի Հանրապետության դատարաններում աշխատանքի կազմակերպման ուսումնասիրություններ.

բ) Վարչության պետի հանձնարարությամբ նախապատրաստում է անհրաժեշտ նյութեր և տեղեկատվություն.

գ) նախապատրաստում է դատական ծառայողի անձնական գործերը դատական ծառայողի ծառայողական գործունեության մասին ամփոփ տեղեկություններ պարունակող փաստաթղթերի և նյութերի ամբողջությունը.

դ) վարում է դատական ծառայողների անձնական գործերը.

ե) վարում է դատավորների անձնական գործերը.

զ) նախապատրաստում և հաշվառում է Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահի, Դեպարտամենտի ղեկավարի կողմից ընդունվող հրամանները և այլ իրավական ակտերը.

է) կազմում է տեղեկանքներ դատական ծառայության թափուր պաշտոնների մասին, դատական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց՝ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանելու մասին.

ը) ապահովում է դատական ծառայության թափուր պաշտոնի համար մրցույթների անցկացումը.

թ) ընդունում է դատական ծառայության պաշտոնների համար հայտարարված մրցույթների հայտերը, եզրակացություն է տալիս մրցույթի մասնակցի՝ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանելու մասին.

ժ) իրականացնում է Օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված իր լիազորություններից բխող այլ գործառույթներ:

13. Վարչության կրտսեր մասնագետն ունի Օրենքով, Դեպարտամենտի կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ):

### **VIII. ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ**

14. Վարչության կրտսեր մասնագետին Օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության դատական ծառայության 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան: